**Տեղեկանք**

**«65 ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում» բաց բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման հիմնավորման մասին**

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը (նպատակը).

Վերակազմակերպել «65 ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում» բաց բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով:

2. Կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները.

«Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում» բաց բաժնետիրական ընկերությունը 98.4% պետական մասնակցությամբ ընկերություն է, որի պետական բաժնեմասի կառավարումը 2008թ. օգոստոսի 14-ի ՀՀ կառավարության N 904-Ա որոշմամբ վերապահված է ՀՀ պաշտպանության նախարարությանը: Ընկերության հիմնական գործունեության ոլորտն է՝

հրաձգային զենքերի փողերի (5.45մմ-7.62մմ տրամաչափի) արտադրությունը, հրաձգային զենքերի հիմնական նորոգումը՝ կոմպլեկտավորող մասերի, այդ թվում փողերի նախագծմամբ, արտադրությամբ և փոխարինմամբ, նոր տեսակի զենքերի մշակումը:

«65 Ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը 100% պետական մասնակցությամբ ընկերություն է, որի կառավարումը 1992թ. հոկտեմբերի 3-ի ՌԱՀ-ի N 15 որոշմամբ վերապահված է ՀՀ պաշտպանության նախարարությանը: Ընկերության հիմնական գործունեության ոլորտն է՝ հրաձգային զենքի, հրետանու առանձին համակարգերի նորոգման և զորքերում տեխնիկական սպասարկման աշխատանքները, ավիացիոն խոցման միջոցների արտադրությունը:

«Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում» ԲԲԸ-ում տեղադրված և գործում է Հայաստանում միակ հրաձգային զենքի փողերի արտադրության տեղամասը, որի միջոցով հիմնականում իրականացվում են ՀՀ

պաշտպանության նախարարության պատվերները, իսկ «65 ռազմական գործարան» ՓԲԸ-ն ունի ավելի մեծ տարածքներ և հզորություններ, այդ պատճառով առաջարկվում է «65 ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում» բաց բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով վերակազմակերպել, որը թույլ կտա ապահովել ընկերության անընդհատ կայուն գործունեությունը, ինչպես նաև պահպանել արտադրական և զորահավաքային հզորությունները ու կազմակերպել թեթև սպառազինության մշակումներ, արտադրություն և նորոգումներ:

**3. <u>Առկա խնդիրների առաջարկվող լուծումները</u>.**

Հաշվի առնելով վերը նշվածը, առաջարկվում է «65 ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում» բաց բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով վերակազմակերպել, որը թույլ կտա ապահովել ընկերության անընդհատ կայուն գործունեությունը, ինչպես նաև պահպանել արտադրական և զորահավաքային հզորությունները ու կազմակերպել թեթև սպառազինության մշակումներ, արտադրություն և նորոգումներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության «65 ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում» բաց բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով վերակազմակերպելու մասին» որոշման նախագծով «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում» բաց բաժնետիրական ընկերությանը վերակազմավորման ընթացքում սահմանված կարգով միջոցներ ձեռք կառնվեն այն դարձնել 100 % պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերություն, որը թույլ կտա՝ հրաժարվել խորհրդից, որպես կառավարման մարմին և պարզեցնել ընկերության կառավարումը:

**<u>4.Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձիք</u>**

«65 ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում» բաց բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության

որոշման նախագիծը մշակվել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից:

**5. Կարգավորման առարկան.**

«65 ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում» բաց բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով վերակազմակերպում:

**6. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը.**

«65 ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում» բաց բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով վերակազմակերպելու արդյունքում ՀՀ-ն դառնում է «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում» բաց բաժնետիրական ընկերության 100 տոկոս սեփականատեր, որը թույլ կտա ընկերությունը ներգրավել ռազմարդյունաբերական զարգացման պետական ծրագրերում՝ համաձայն որի ներդրումները նախատեսվում է իրականացնել առաջնահերթ 100 % պետական ձեռնարկություններում, ինչպես նաև ընկերությանը վերաբերող հարցերով առավել հստակ և օպերատիվ կերպով մասնակցել բանակցություններում՝ միջազգային պայմանագրերի շրջանակներում համատեղ ձեռնարկությունների ստեղծման գործընթացներում:

## Տեղեկանք

### «65 ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում» բաց բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծն ընդունելուց հետո իրավական այլ ակտերում փոփոխություններ կատարելու մասին

ՀՀ կառավարության «65 ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում» բաց բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով վերակազմակերպելու

մասին» որոշումն ընդունելու առնչությամբ ՀՀ իրավական այլ ակտերում փոփոխություններ չեն կատարվելու:

2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը

Համապատասխանում է:

**Տեղեկանք**

**«65 ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում» բաց բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով վերակազմակերպելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծն ընդունելուց հետո լրացուցիչ ֆինանսական միջոցների և պետական բյուջեի եկամուտներում ու ծախսերում փոփոխություններ կատարելու մասին**

ՀՀ կառավարության «65 ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում» բաց բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով վերակազմակերպելու մասին» որոշման նախագիծն ընդունելուց հետո լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն պահանջվելու և 2017թ. ՀՀ պետական բյուջեի եկամուտներում ու ծախսերում փոփոխություններ չեն կատարվելու:

## ՏԵՂԵԿԱՆՔ

### Հայաստանի Հանրապետության կառավարության «65 ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը «Գառնի-Լեռ» գիտա-արտադրական միավորում» բաց բաժնետիրական ընկերությանը միացնելու ձևով վերակազմակերպելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ շահագրգիռ պետական մարմինների դիտողությունների և առաջարկությունների մասին

| Դիտողություններ և առաջարկություններ | ՀՀ ՊՆ հիմնավորումը |
|---|---|
| **ՀՀ Նախագահի աշխատակազմ՝ ելք ՆՂ-1671 առ 28.06.2017թ** | |
| Դիտողություններ և առաջարկություններ չկան | Ընդունվել է ի գիտություն |
| **ՀՀ ազգային անվտանգության խորհրդի եզրակացությունը՝ ելք N Ախ-1066 առ 06.05.2017** | |
| Դիտողություններ և առաջարկություններ չունի | Ընդունվել է ի գիտություն |
| **ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության եզրակացությունը՝ ելք N 05/16.2/4532-17 առ 12.05.2017** | |
| Դիտողություններ և առաջարկություններ չունի | Ընդունվել է ի գիտություն |
| **ՀՀ ֆինանսների նախարարության եզրակացությունը՝ ելք N01/82-5/8319-17 առ 14.05.2017** | |
| Դիտողություններ և առաջարկություններ չունի | Ընդունվել է ի գիտություն |
| **ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության եզրակացությունը՝ ելք N01/13.23/2842-17 առ 10.15.2017** | |
| Նախագծում ավելացնել դրույթ «65 ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերության գործունեության դադար-ման պետական պետական գրանցման գործընթացի մասին | Ընդունվել է և նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն |
| **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի եզրակացությունը՝ ելք 01/3.4/16843-17 առ 16.05.2017** | |
| Դիտողություններ և առաջարկություններ չունի | Ընդունվել է ի գիտություն |
| **ՀՀ արդարադատության նախարարության եզրակացությունը՝ ելք N01/14/9568 առ 06.06.2017** | |
| 1.Նախագծի վերնագրում և 3-րդ կետում «Գառնի-Լեռ» ԳԱՄ» բառերն փոխարինել «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միա-վորում» բառերով, | Ընդունվել է և նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն |
| 2.Նախագծի կետերի համարակալման հաջորդականությունն համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին, | Ընդունվել է և նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն |
| 3.Նախագծի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1.Վերակազմակերպել «65 Ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերությունը (պետական գրանցման համար՝ 80.140.00374) «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միավորում բաց բաժնետիրական ընկերությանը (պետական գրանցման համար՝ 222.130.00056) միացման ճանապարհով:» | Ընդունվել է և նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն |
| 4.Նախագծի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «2.Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախա-րարին՝ Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում ապահովել վերակազմակերպման գործընթացի, «65 Ռազմական գործարան» փակ բաժնետիրական ընկերու-թյան դադարեցման և «Գառնի-Լեռ» գիտաարտադրական միա-վորում» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխության պետական գրանցումների իրականացումը:»: | Ընդունվել է և նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն |
| 5.Նախագիծն համաձայնեցնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ: | Համաձայնեցված է |